





**Հայաստանի փրկարար ծառայությունը զանգահարեք 1-01, 1-12**

**Ավտոպատահարներ**

Սեպտեմբերի 26-ին Երևան-Գյումրի ավտոճանապարհի 58-րդ կմ-ին տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար: Դեպքի վայր է մեկնել Արագածոտնի մարզային փրկարարական ջոկատը:



Պարզվել է, որ դեռևս անհայտ հանգամանքներում, վթարի է ենթարկվել «ՎԱԶ-2107» մակնիշի 04 ՕՍ 246 պետհամարանիշով ավտոմեքենան, ինչի հետևանքով վարորդ, 1987 թ. ծնված Մենուա Մեխակյանը, ուղևորներ՝ 1989 թ. ծնված Դավիթ Ասատրյանն ու 1985 թ. ծնված Արտակ Խաչատրյանը տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Աշտարակի հիվանդանոց: Դ. Ասատրյանը հիվանդանոցում մահացել է, իսկ տուժածներից մյուս երկուսը՝ տեղափոխվել են Երևանի «Արմենիա» բժշկական կենտրոն:

Վթարից տուժել է եւս երկու մարդ, որոնք տեղում ստացել են բուժօգնություն:

\*\*\*

Սեպտեմբերի 27-ին Երևան-Մեղրի ավտոճանապարհի 228-րդ կմ-ին, դեռևս չպարզված հանգամանքներում, «ՎԱԶ-2103» մակնիշի 10 ՏՏ 457 պետհամարանիշով ավտոմեքենան բախվել է «Մերսեդես-300Ե» մակնիշի 15 ՍՕ 187 պետհամարանիշով ավտոմեքենային:

Վթարի հետևանքով «ՎԱԶ-2103» մեքենայի վարորդ, 1977 թ. ծնված Սամվել Բաբայանը տեղում զոհվել է, իսկ «Մերսեդես-300Ե» մակնիշի ավտոմեքենայի ուղևոր, Իրանի քաղաքացի՝ 1944 թ. ծնված Իսթիաս Մահմեդ Ալի Ղուսեյնը տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Եղգնաձորի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

\*\*\*

Սեպտեմբերի 28-ին Երևան-Աշտարակ ավտոճանապարհին՝ «Վահագնի» քաղաքային հարակից տարածքում, դեռևս չպարզված հանգամանքներում, «Միցուբիշի» մակնիշի 16 ՕՏ 167 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկի մասից եւ շրջվել, ինչի հետևանքով վարորդը տեղում զոհվել է:

Դեպքի վայր մեկնած փրկարարներն ավտոմեքենայից դուրս են բերել զոհվածի դիակը եւ հանձնել 1-03 ծառայության աշխատակիցներին:

\*\*\*

Հոկտեմբերի 1-ին Երևանի «Մետրոպոլ» հյուրանոցի հարեւանությամբ, դեռևս չպարզված հանգամանքներում, իրար են բախվել մի «Մերսեդես» եւ «ՎԱԶ-31» մակնիշի 09 ՕՕ 664 պետհամարանիշով ավտոմեքենաները:

Դեպքի վայր մեկնած փրկարարները «ՎԱԶ-31» մակնիշի ավտոմեքենայից դուրս են բերել վարորդ Տիգրան Դուրգարյանին, որը տեղափոխվել է «Ներսես Շնորհալի» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը միջին ծանրության է:

ձեւ չպարզված հանգամանքներում, իրար են բախվել մի «Մերսեդես» եւ «ՎԱԶ-31» մակնիշի 09 ՕՕ 664 պետհամարանիշով ավտոմեքենաները:

Դեպքի վայր մեկնած փրկարարները «ՎԱԶ-31» մակնիշի ավտոմեքենայից դուրս են բերել վարորդ Տիգրան Դուրգարյանին, որը տեղափոխվել է «Ներսես Շնորհալի» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը միջին ծանրության է:

\*\*\*

Սեպտեմբերի 29-ին, ժամը 10.53-ին Երևանում է ստացվել, որ Գյումրիի չորս ժողով 1 երաժշտական դպրոցի հիմնապատից քարեր են թափվել:

Պարզվել է, որ վթարային շենքի արեւմտյան հատվածի հիմնապատից ինքնափլուզվել է ճամփեզրին եւ թափվել 1 քմ մակերեսով քարեր:

Տուժածներ չկան:

Ահազանգի վայր մեկնած փրկարարները զգուշացնող ժապավենով արգելափակել են վերոնշյալ հատվածը:

\*\*\*

Սեպտեմբերի 28-ի լույս 29-ի գիշերը երկարատեւ անձրեւների հետևանքով փլվել է Սյունիքի մարզի Թեյս բանավանի 1-ին տունը:

Չոհեր եւ վիրավորներ չկան:

Դեպքի մասին տեղյակ են պահվել մարզպետարանի քաղաքաշինության բաժինը եւ Կապանի քաղաքապետը:

**Ֆուտբոլ**

Սեպտեմբերի 29-ին, ժամը 10.53-ին Երևանում է ստացվել, որ Գյումրիի չորս ժողով 1 երաժշտական դպրոցի հիմնապատից քարեր են թափվել:

Պարզվել է, որ վթարային շենքի արեւմտյան հատվածի հիմնապատից ինքնափլուզվել է ճամփեզրին եւ թափվել 1 քմ մակերեսով քարեր:

Տուժածներ չկան:

Ահազանգի վայր մեկնած փրկարարները զգուշացնող ժապավենով արգելափակել են վերոնշյալ հատվածը:

\*\*\*

Սեպտեմբերի 28-ի լույս 29-ի գիշերը երկարատեւ անձրեւների հետևանքով փլվել է Սյունիքի մարզի Թեյս բանավանի 1-ին տունը:

Չոհեր եւ վիրավորներ չկան:

Դեպքի մասին տեղյակ են պահվել մարզպետարանի քաղաքաշինության բաժինը եւ Կապանի քաղաքապետը:

**Հրդեհներ**

**Հանրապետության տարածքում գրանցվել է հրդեհի բռնկման 44 դեպք, որոնցից 7-ը՝ խոտածածկ տարածքներում:**

**Խոտածածկույթ**

Սեպտեմբերի 25-ին Տավուշի մարզի Վազաշեն գյուղին հարակից դաշտում այրվել են 1 հա խոտ եւ մացառուտ:

Խաչքառակ գյուղին հարակից դաշտում բռնկված հրդեհից այրվել է 6 հա խոտատարածք: Հրդեհի նոր բռնկումներից խուսափելու համար գյուղի բնակիչները եւ Իջևանի հրշեջ-փրկարարներն իրականացրել են հերթապահություն:

Չարենցավանի գերեզմանատանը հարակից տարածքում այրվել են 2 հա խոտ եւ թփուտ: Հրշեջ-փրկարարները տարածքում սահմանել են հերթապահություն:

**Պահեստավորած խոտ..**

Սեպտեմբերի 25-ին Շիրակի մարզի Ազատան գյուղում բռնկված հրդեհի հետևանքով այրվել են Ֆ. Մկրտչյանի տան բակում պահեստավորած 400 հակ ծղուղ, Ս. Մկրտչյանին պատկանող մարագի՝ տանիքի 10 քմ մակերեսով մի հատված եւ այնտեղ պահեստավորած 300-ական հակ խոտն ու ծղուղը:

Այդ օրն այրվել է նաեւ Արմավիրի մարզի Վերին Արտաշատ գյուղի բնակիչ Զ. Թումոյանի տան բակում պահեստավորած 600 հակ խոտը:

Սեպտեմբերի 26-ին Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղի Երեւանյան փողոցի 2-րդ տան բակում բռնկված հրդեհի հետևանքով այրվել է Մարտիկի անբարած 500 հակ խոտը: Նույն օրը Տավուշի մարզի Ջորական գյուղում բռնկված հրդեհից այրվել է Պողոսյանի անբարած 4 տոննա խոտը:

Սեպտեմբերի 26-ին հրո ճարակ են դարձել Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղի բնակիչ

**Տոնը վերածվել է հրճեցոցի**

Սեպտեմբերի 30-ին Հնդկաստանի Ռաջաստան նահանգի տաճարներից մեկում կրոնական տոնակատարության ժամանակ հավաքվել էր ավելի քան 12 հազար մարդ:

Ինչպես հայտնում են տեղական լրատվամիջոցները, տոնախմբության ժամանակ լուրեր են տարածվել, թե իբր տաճարում ռումբ է տեղադրված: Առաջացած խուճապի եւ հրմշտոցի հետևանքով զոհվել է 197 մարդ: Տաճարից դուրս վազող հազարավոր ուխտագնացների ճնշման տակ փլվել է շինության պատերից մեկը: Ըստ տեղական իշխանությունների՝ փլատակներում դեռ շարունակում են մարդիկ մնալ:

Անցյալ տարի այս նույն տոնակատարության ժամանակ փլվել էր մեկ այլ տաճարի պատերից մեկը, ինչի հետևանքով զոհվել էր 150 մարդ:



**Փլուզում դորոցում**

Հոկտեմբերի 1-ին, առավոտյան ժամը 09.30-ի սահմաններում, Ռուսաստանի Օրենբուրգի շրջանի Բեյլաեկա ավանի միջնակարգ դպրոցում փլվել են երկրորդ եւ երրորդ հարկերի աստիճաններն ու աստիճանահարթակը: Վերջին տվյալներով՝ զոհերից 5-ը 11-րդ դասարանի աշակերտներ են: Դեպքի վայր ժամանած փրկարարները փլատակներից հանել են տասը տուժածի, որոնցից չորսը տեղափոխվել են հիվանդանոց: Դպրոցի շենքից տարահանվել է 342 երեխա, 32 ուսուցիչ եւ շենքում աշխատող շինարարներ: Հայտնի է դարձել, որ դպրոցում իրականացվում էին վերանորոգման աշխատանքներ:

Ըստ փրկարարների՝ փլուզման մակերեսը 250 քառակուսի մետր է: Դատախազու-

թյունը հարուցել է քրեական գործ: Որպես փլուզման պատճառ նշվում է շինարարական աշխատանքների ժամանակ անվտանգության կանոնների խախտումը:

Դպրոցի եռահարկ շենքը կառուցվել է 1964 թվականին եւ դրանից հետո հիմնարար վերանորոգման չի ենթարկվել:

**Բանկը 3 ժամում 2 անգամ քալանվել է**

Կալիֆոռնիայի Սան Դիեգո քաղաքում Ուելս Ֆարգո բանկի մասնաճյուղը երեք ժամվա ընթացքում ենթարկվել է կրկնակի թալանի:

Ըստ տեղական լրատվամիջոցների՝ ոստիկանությունը պարզել է, որ կողոպուտներն իրականացրել են երկու տարբեր հանցագործներ: Նախ նրանցից մեկն է, աստիճանակով վախեցնելով բանկի աշխատակցին փող պահանջել եւ հաջողությամբ դուրս եկել բանկից: Երեք ժամ անց նույն բանկ է մտել մյուս կողոպուտիչը: Իր գործն ավարտելուց հետո հանցանքի վայրից նա նույնպես անաղմուկ չքացել է:

Հանցագործներին մինչ այժմ չեն գտել:

**Տեսասահում բռնկված հրդեհը 15 մարդու կյանք է խլել**

Սեպտեմբերի 30-ի գիշերը Ճապոնիայի Օսակա քաղաքի «Չացույա» տեսասրահում հրդեհ է բռնկվել, ինչի հետևանքով զոհվել է սրահի 15 այցելու: Դեպքի վայրում աշխատել է 40 հրշեջ մեքենա: Հրդեհը հաջողվել է մարել մոտ մեկ ժամ հետո: Հրդեհից տուժել է հիվանդանոց է տեղափոխվել 10 մարդ, նրանցից չորսը ծանր

վիճակում են:

Ըստ մասնագետների՝ արագորեն տարածված ծխի պատճառով մարդիկ չեն կարողացել դուրս գալ շենքի մեջ միջանցքներից:

Տեղի ունեցած միջադեպից հետո Օսակայի եւ հարեւան Կիոտո քաղաքի իշխանությունները կարգադրել են ստուգումներ անցկացրել մոտ 500 նմանատիպ սրահներում:



**Հրճեցոց դիսկոտեկում**

Հոկտեմբերի 1-ի գիշերը Տանզանիայի Տաբորա շրջանի դիսկոտեկերից մեկում տեղի ունեցած հրմշտոցի հետևանքով զոհվել է 19 եւ վնասվածք ստացել մի քանի տասնյակ մարդ: Բոլոր զոհվածները 12-17 տարեկան պատանիներ են:

Ըստ ոստիկանների՝ պարասրահում չափազանց շատ մարդ է հավաքվել, ինչի հետևանքով սրահի հեղձուցիչ պայմաններում իրարանցում եւ հրմշտոց է սկսվել: Պատանիները հավաքվել էին նշելու Ռամադան կրոնական տոնի ավարտը:

Ավետիսյանի առանձնատան հարեւանությամբ ամբարած 180 հակ խոտն ու ծղոտը, իսկ Գեղարքունիքի մարզի Կախակն գյուղի բնակիչ Պռայանին պատկանող տնտեսությունում՝ 200 հակ անասնակերը:

Սեպտեմբերի 29-ին Տաշիրի Երեւանյան փողոցի 362 հասցեում բռնկված հրդեհի հետեւանքով, այրվել է 3. Ալբերտյանի պահեստավորած 2,5 տոննա խոտը:

### Կարճ միացումից

Սեպտեմբերի 29-ին Երեւանի Տիչինայի փողոցի վերջնամասում գտնվող գազալցակայանին հարակից տարածքում բարձր լարման էլեկտրալարերի կարճ միացման հետեւանքով այրվել են Ս. Մնացականյանին պատկանող ինքնաշեն տնակը եւ այնտեղ պահեստավորած գյուղատնտեսական իրերը:

### Գազի բալոնի բռնկում

Սեպտեմբերի 25-ին հրդեհ է բռնկվել Արարատի մարզի Դալար գյուղի բնակիչ Անահիտ Գովհաննիսյանի տանը:

Պարզվել է, որ տեղի է ունեցել 3 կիլոգրամանոց գազի բալոնի բռնկում, ինչի հետեւանքով 1960 թ. ծնված Ա. Գովհաննիսյանը թեթեւ այրվածքներ ստանալով՝ տեղափոխվել Արտաշատի հիվանդանոց:

Ցուցաբերած առաջին բուժօգնությունից հետո տուժածը դուրս է գրվել հիվանդանոցից:

### Տանիք, խոտ ու հավեր

Հոկտեմբերի 1-ին հրդեհ է բռնկվել Վայքի Մայիսյան փողոցի 14 տանը: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Այրվել են 4. Հակոբյանին պատկանող անասնագոմի՝ 24 ըմ մակերեսով տանիքը եւ այնտեղ պահեստավորած 50 հակ խոտը: Հրդեհից ծխահարվել է 30 հավ:

## ԼՂՀ ՓԾ լրատվական կենտրոն

### Հրդեհներ

Սեպտեմբերի 29-ին Ստեփանակերտ-Ասկերան մայրուղում բռնկված հրդեհի հետեւանքով մասամբ այրվել է «Ջիպ-Սանյո» մակնիշի մի ավտոմեքենայի շարժիչը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

### Զենք-զինամթերք

Սեպտեմբերի 24-ին Ասկերանի շրջանի Կարմիր գյուղում հայտնաբերվել է հակատանկային 4 ավիառումբ:

Սեպտեմբերի 25-ին Ասկերանի շրջանի Վարդաձոր գյուղում հայտնաբերվել են 2 ձեռքի նռնակ եւ փոքր տրամաչափի 700 փամփուշտ:

Սեպտեմբերի 26-ին Ստեփանակերտի Շիրվանգաղեի 1 հասցեում տան վերանորոգման ժամանակ հայտնաբերվել է 1 ձեռքի նռնակ:

Հայտնաբերված ողջ զինամթերքը վնասագերծվել է փրկարար ծառայության սակրավորների կողմից:

### Ավտոպատահար

Սեպտեմբերի 24-ին Ստեփանակերտի Ազատամարտիկների փողոցում (ավտոկայանի դիմաց) տեղի է ունեցել վրաերթ, որի հետեւանքով 1929 թ. ծնված Ս. Պետրոսյանը վնասվածքներով տեղափոխվել է Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոց:

Ըստ բժիշկների տուժածի առողջական վիճակը բավարար է:

Նաիրա Եղիազարյան

## ՍԵՅՍՄԻԿ ՊՂՇՏՊՂՆՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 25-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցել:

**Տարածաշրջանում.** 3 բալ եւ ավելի ուժգնությամբ մեկ սեյսմիկ ցնցում է գրանցվել: Այն տեղի է ունեցել սեպտեմբերի 27-ին Իրանի տարածքում, Մակու քաղաքից 39 կմ հյուսիս-արեւմուտք, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3 բալ:

**Տարածաշրջանից դուրս.** 6 եւ ավելի մագնիտուդով երկու ուժեղ երկրաշարժ է գրանցվել: Սեպտեմբերի 25-ին Չինաստանի Տիբեթի ինքնավար հանրապետության հարավ-

արեւմտյան մասում (Նեպալի հյուսիսային սահմանները հատված) տեղի է ունեցել 6 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Սեպտեմբերի 29-ին Նոր Զելանդիայի Կերմադեկ կղզիների Ռաուլ կղզուց 70 կմ հյուսիս-արեւելք գրանցվել է ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 7,0 մագնիտուդ: Ստորգետնյա ցնցումները զգացվել են Հյուսիսային կղզու արեւելյան շրջանում: Երկրաշարժը ցունամի չի առաջացրել: Մեկ ժամ անց հետեւել է 5,3 մագնիտուդով հետցնցում: Բոլոր նշված երկրաշարժերի հետեւանքով տուժածներ եւ ավերածություններ չկան:

ՍՊԱԾ գործակալություն

## .. 1-03 .. ԵՐԵՎԱՆ

**Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 2871 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 356 մարդ: Եղել է մանկական 212 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 33 երեխա:**

**Գրանցվել են 30 մահ եւ 27 դժբախտ պատահար:**

### Սեպտեմբերի 25

Նոր Նորքի 5-րդ զանգվածում վթարի են ենթարկվել եւ բազմակի վնասվածքներով «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն տեղափոխվել 26-ամյա Կ. Խաչատրյանն ու 27-ամյա Ա. Ստեփանյանը:

Շինարարների 10/1 հասցեից քիմիական նյութից թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 23-ամյա Ա. Նիկողոսյանը:

Դեղորայքային թունավորումով «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 30-ամյա Ս. Հարությունյանը:

### Սեպտեմբերի 26

Բաշինջաղյան 174/13 հասցեից դանակահարման հետեւանքով ստացած կրծքավանդակի ծակած վերքով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 23-ամյա Ա. Հակոբյանը, իսկ որովայնի պատի ծակած վերքով Այգեստանի 11 փողոցի 3/5 հասցեից «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 25-ամյա Ռ. Մարկոսյանը:

Նոր Նորքի 1-ին զանգվածում՝ «Աթար» սուպերմարկետի մոտ տեղի ունեցած վթարի հետեւանքով տուժել եւ աջ սրունքի կտրվածքով «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 41-ամյա Ռ. Կարապետյանը:

## .. Եղանակի տեսություն ..

Սեպտեմբերի 25-26-ը, 29-ին առանձին շրջաններում, 27-28-ը, 30-ից հոկտեմբերի 1-ը՝ շրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ 3-15 մմ, 28-ին զգալի՝ 20-35 մմ (Երեւանի Արաբկիր թաղամասում՝ 47 մմ):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում՝ +23...+28, Տավուշում եւ Սյունիքի հովիտներում՝ +20...+25, Լոռիում՝ +15...+20, Լեռնային շրջաններում, Սյունիքի նախալեռներում եւ Արցախում՝ +13...+18 °C:

### Սեպտեմբերի 27

Ժամելի սպիրտից թունավորումով «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել Նոր Նորքի 7-րդ զանգվածի 34 հասցեում բնակվող 7-ամյա Ա. Սահակյանը:

Նոր Նորքի 6-րդ զանգվածում վրաերթի են ենթարկվել եւ անգիտակից վիճակում «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն տեղափոխվել 70-75 տարեկան մի տղամարդ:

### Սեպտեմբերի 28

Ավանի տարբեր փողոցներում վթարի ենթարկված 52-ամյա Ռ. Ամիրջանյանը՝ աջ ծնկափողի սալաքարով եւ Վ. Դանիելյանը՝ ուղեղի ցնցումով տեղափոխվել են «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

### Սեպտեմբերի 29

Տիգրան Մեծի պողոտայում վրաերթի հետեւանքով 60-ամյա Ա. Աթեյանը ստացել է բազմակի վնասվածքներ եւ տեղափոխվել «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Դանակահարման հետեւանքով ստացած կրծքավանդակի ծակած-կտրված վերքով Խարբերդի 16 փողոցից «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 37-ամյա Վ. Սոյանը:

### Սեպտեմբերի 30

Դրոյի 68 հասցեում բարձրությունից ընկել եւ մահացել է 62-ամյա Հ. Սարգսյանը:

Մամիկոնյանց փողոցի 2 շենքի մոտ տեղի ունեցած վթարից տուժել եւ զլխուղեղի ցնցումով վիրաբուժության ինստիտուտ է տեղափոխվել 45-ամյա Արսենը:

## Արտակարգ իրավիճակները սեպտեմբերին

2008 թ. սեպտեմբերին Հայաստանի տարածքում գրանցվել է հրդեհի 255 դեպք:

Գրանցվել է դիակի հայտնաբերման 4 դեպք: Արձանագրվել է փրկված 2 դեպք, որոնցից 1-ը Շիրակի մարզում, մյուսը՝ Սյունիքի: Ձուներ եւ վիրավորներ չկան:

Գրանցվել է պայթյունի երեք դեպք, տուժել է մեկ մարդ: Գրանցվել է ջրահեղձման 2 դեպք. մեկին հաջողվել է փրկել: Հոսանքահարումից զոհ-

վել է մեկ մարդ, երկուսը՝ տուժել: Եղել է կարկուտի մեկ դեպք (սեպտեմբերի 25-ին Վայոց ձորի մարզի Հորբատեղ գյուղում):

Արձանագրվել է զենք-զինամթերքի հայտնաբերման մեկ դեպք:

Ճանապարհատրանսպորտային պատահարների 227 դեպքից զոհվել է 39, վիրավորվել՝ 302 մարդ: (Ի դեպ, 9 ամսվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 6ՏՊ-ի 1587 դեպք, զոհվել է 285, վիրավորվել՝ 2295 մարդ):

Թունավորումների, հրդեհներից տուժածների տվյալները դեռ վերջնական չեն:

## Ծիծաղը երկարացնում է կյանքը 108-ը նոր էր նշել

Օրերս Մոսկվայում՝ կյանքի 109-րդ տարում մահացել է Լեզենդար ծաղրանկարիչ Բորիս Եֆիմովը: Նա ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ էր, պետական մրցանակի եռակի եւ Ստալինյան մրցանակի կրկնակի դափնեկիր, սոցիալիստական աշխատանքի հերոս, գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, քաղաքական սատիրայի վարպետ եւ անգերազանցելի ծաղրանկարիչ: Այս երկար թվարկումը վկայում է այն մասին, որ Եֆիմովը կարողացել է իր տեղը գտնել կյանքում եւ զբաղվել սիրելի գործով: Բոլորովին վերջերս՝ սեպտեմբերի 28-ին, նկարիչը նշել էր ծննդյան 108-ամյակը: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը նրան անձամբ էր շնորհավորել: Այդ օրը հոբելյարը գործընկերներից ու բարձրաստիճան պաշտոնյաներից շնորհավորանքներ ընդունելուց զատ, խոսում էր իր ապագա ծրագրերի մասին:



մտածել երկարակեցության մասին, սակայն ոչ մի օրինաչափություն չկարողացա գտնել: Ինչ ուզել՝ կերել եմ (նույնիսկ հիմա կարող եմ առավոտյան հանգիստ հաց ու երշիկ ուտել), բոլորի պես օպտագործել եմ օդի, բայց երբեք չսպիղ չեմ անցել: Առավոտյան 30-րոպեանոց մարզանք եմ անում: Միշտ արել եմ այն, ինչ ինձ դուր է եկել: Եվ ամենակարեւորը՝ կյանքի բոլոր տիաճություններին նայել եմ փիլիսոփայորեն: Աշխատել եմ խուսափել ավելորդ ապրումներից, նույնիսկ երբ գնդակահարեցին Եղբորս, իսկ ինձ վրա շուրջ 16 տարի՝ դրոշմեցին «ժողովրդի թշնամու» ազգականի խարանը: Գուցե ես երկարակեցության գեներանտ, որովհետեւ մայրս ապրել է մինչեւ 89 տարեկանը, իսկ ես... Ես արդեն մի տեսակ հոգնել եմ»:

Նա շարունակում էր աշխատել նաեւ կյանքի վերջին օրերին: Ծննդյան 107-ամյակի օրը Եֆիմովը նշանակվում է «Իզվեստիա» թերթի գլխավոր նկարիչ: Գործընկերները պատմում են, որ նա հանդիսությունների սրահ էր եկել մի կնոջ ուղեկցությամբ ու պարել գրեթե ողջ երեկո:



# Քառասուն րոպե Հավերժի հետ

Ե՛լ ՇՊԱ՞ 1-ՇՂ չգա՞ծ

- Ի դեպ, անհրաժեշտ է իմանալ նաեւ մի քանի թուրքերեն բառ: Ամեն ուղեկալում հարցնում են՝ ու՞ր եք գնում, եւ մենք, մինչեւ Ղարս հասնելն ասում էինք՝ Ղարս, միջեւ Իզդիր ասում էինք՝ Իզդիր, ապա՝ Վան... Ու գրանցվում էինք, իհարկե: Թուրքերի հետ խոսակցության մի դրվագ. «Դու՞ յու սփիք ինգլիշ»՝ հարցրինք: «Ինգլիշ»՝ ասաց թուրքը՝ ինչ-որ բանի չհավատալով, ձեռքը մեկնեց մեր անձնագրերին, բացեց ու բացականչեց. «Արմենի»՝: Ու գոհ էր ինքն իրենից, որ «բռնեց» մեր սխալը...

- Հիմա եկե՛ք միասին, բայց այս անգամ մտնով, կրկին անցնեն՝ ձեր կրած ճանապարհը:

Ժամը 5-ին մոտ դուրս եկանք Երեւանից: Միկրովտորուսով

«Մենք գազաթը պիտի բարձրանանք երկու օրվա մեջ»՝ ասում ենք քրդին: Ասում է, թե սլովակները, որոնք մեզմից տարիքով էին ու ֆիզիկապես թույլ, դա անելու են երեք օրում, եւ առաջարկում է մեզ մեծակ բարձրանալ: Կարո՞ղ եք՝ հարցնում է...

Ես ու Արամայիսն առանձնացանք, շատ կարճ, երկու-երեք բառ փոխանակեցինք ու կայացրինք մեր որոշումը. բարձրանալու ենք առանց ուղեկցորդի: Այդ պահին ապրում էինք Մասիսի գագաթն առանց ավելորդ վկաների բարձրանալու հաճույքը...

**Տեղեկանք. Արարատ բարձրանում են հակառակ, այսինքն՝ ոչ դեպի Արեւելյան Հայաստան նայող կողմից, որտեղ կան բոլորովին չուսումնասիրված սառցադաշտեր: Նաեւ՝ Հայաստանին**

ու Մասիսի լանջերին «կազմակերպած առեւտրի» արդյունքը եղավ հաջորդ օրվա ավելորդ ծանրաբեռնվածությունը:

Ասեմ, որ 3200 մետրից հետո միայն քարեր են, իսկ 3800-ից սկսած կտրուկ մեծանում է լանջի թեքությունը, օդն է նոսրանում, փոխվում է ճնշումը: Գիշերումն այդ պայմաններում հատկապես կարեւորվում է. քնած օրգանիզմն ավելի հեշտ ու հիմնավոր է հարմարվում կլիմային:

Մայրամուտին վրաններն արդեն խփել էինք:

Սեպտեմբերի 16-ի առավոտյան ժամը 7-ն անց կեսին սկսեցինք վերելքը:

Ժամը 14-ին գագաթին էինք: Այս քվերը, օրերն ու ժամերը, վայրկյաններն այլեւս մեր կյանքի գլխավոր իրադարձություններից են: Դրանք երբեք չեն մոռացվելու:

Ու նաեւ՝ մեր խմբի ուղեկցորդը եղավ մեր փորձառու ընկերն ու ուսուցիչը՝ Արամայիս Սեդրակյանը: Գագաթին էինք:

Հարցի չսպասելով՝ փորձեմ նկարագրել առաջին պահերը:

Սովորաբար, այդպիսի մի վերելք հաղթահարելով, մարդիկ գրկախառնվում են, դրանով փաստորեն շեշտելով իրենց հաղթանակը կամ գոնե՝ մշտելով հաղթահարումի հաջողությունը: Ամբաստուրելի մի բան տեղի ունեցավ մեր պարագայում: Գագաթին հայտնվելուն պես մենք, բոլորս, առանց որեւէ պայմանավորվածության... փարվեցինք Լեռանը: Գրկախառնվեցինք Լեռան հետ՝ հոգու, սրտի մղումով: Այդ մղումն ինչո՞վ բացատրես, ինչո՞ւ՝ բացատրես:

Հետո միայն, կանգնեցինք ու շնորհավորեցինք իրար: Հետո կրկին յուրաքանչյուրիս մեջ ցանկություն առաջացավ առանձնանալու: Որս՝ կանգնած, որս նստած էինք՝ առանձին՝ մոտ 7-8 րոպե:

Մարի հետ գրուցում էինք՝ ասացին տղերքը:

Մասիսն իրականում հոգի ունեցող Լեռ է: Խոսք է խոսում, շնչում է, ճառագում:

Քառասուն րոպե մնացինք վերելում: Սկսեցինք իջնել: Իջանք մինչեւ 3800 մ., հավաքեցինք ճամբարը, այնուհետեւ՝ դեպի տուն:

Սեպտեմբերի 18-ին կրկին Ծիծեռնակաբերդում էինք. տեղ հասցրինք Արարատի գագաթից բերած հողը: Ուխտագնացությունն ավարտված էր:



րատի գագաթից հենց մոր իջածին:

- Չե՛ր մտնով չանցա՞վ, արդյո՞, Տաթևանը:

- Չգարմանք, բայց Տաթևանի փնտրուտը մեզ վաղուց հետաքրքրող խնդիր է: Բանն այն է, որ նույն Արամայիս Սեդրակյանը տարիներ է նվիրել դրան, հատուկ ուսումնասիրել է հարցը, աշխատել է այդ ուղղությամբ եւ, իսկն ասած, պատրաստվում է հանդես գալ ու ներկայացնել իր եզրակացությունները: Ի դեպ, դժվարանում են որեւէ բացատրություն տալ, բայց վայրէջքի ճանապարհին, առանձին մի ներշնչվածությամբ Արամայիսն ասաց. «Հիմա արդեն հավատում եմ, որ Նոյը եղել է»: Սակայն Տաթևանը կա՞, թե՞ չկա, գտնել հնարավոր է, թե՞ ոչ, նման հարցերի, կարծում եմ, սպառնիչ պատասխան տալը դեռ վաղ է:

- Մեր վերջին հարցը: Տարբերություն կա՞ Մարաշի գագաթը բարձրացած եւ չբարձրացած մարդու միջև:

- Կարծում եմ, ավելի ճիշտ կլինի դիտարկել նույն մարդուն՝ միջեւ բարձրանալն ու բարձրանալուց հետո: Ես ահա տեսնում եմ, որ կա: Տեսնում եմ, որ միջեւ բարձրանալս թերի եմ եղել: Մարդ այդ քայլն անելով՝ փոխվում է: Ու հենց՝ Լեռան շնորհիվ: Որովհետեւ, ինչպես ասացի, Արարատը հոգի ունի: Նա նաեւ զգում է, թե ով է բարձրացողը, ինչ նպատակով է բարձրանում: Ընդամենն իր միջոցով ինքնահաստատվելու, թե՞ մաքրվելու: Եթե մաքրվելու՝ օգնում է, ստիպում է քեզ նայել քո ներսը, ստիպում է խորհել մաքրութան մասին, հասկացնում է, որ դրանից կարելոր բան գոյություն չունի: Ես միմիայն դրա հետ եմ կապում, օրինակ, եղանակային պայմանները մեր՝

գագաթին եղած ժամանակ: Ի դեպ, մենք գագաթին ոտք դրեցինք առանց «կատվիկների»: Երկաթե ճանկերը, որ ամրացնում են կոշիկներին, չուզեցինք դիպցնել սրբազան գագաթին: Ուրեմն՝ եղանակը... Լեռը կապ հաստատեց մեզ հետ. սառցադաշտերի կողմի կապույտ-կապույտ երկնքի չզիտես որ հատվածից ելած թեթեւ ամպեր էին գալիս դեպի մեզ ու հերթով կախվում հայկական կողմի վրա... Իսկ հետո էլ, երբ գագաթից փորձում էինք նայել դեպի տուն, մի պահ պատուհան բացվեց, եւ ամպերի միջից երեւացին Արագածն ու Եջմիածինը...

Գագաթ հասցրինք նաեւ Հայաստանի դրոշմը: Փոքրիկ դրոշ էր: Հագուստի տակ էինք տարել: Որ օտար աչքերից հեռու հանդիպելին ինքն ու լեռը:

Այդպիսի բաներ ահա: Իսկ Լեռան հետ գրույցը շարունակվում է ամբողջ կյանքում: Ես դա արդեն զգում եմ, - ավարտեց մեր գրուցակիցը:



հասանք վրաց-թուրքական սահմանի այն հատվածին, որը Փոսով է կոչվում: Այն կողմում մեզ դիմավորեցին քրդերն ու տարան մինչեւ Բայազետ: Նրանց հետ նախապես էինք պայմանավորվել, ինտերնետով: Ճշտել էինք օրը, ժամը, ինչ ենք տանելու մեզ հետ, ովքեր ենք. կարգն է այդպես: Քուրդը մեզ տարավ իր տուն՝ Բայազետում, որտեղ պիտի գիշերեինք: Պայմանավորվեցինք, որ վաղը առավոտյան ժամը 5-ին սկսում ենք վերելքը: Բայց ինքը, որ փաստորեն մեր ուղեկցորդը պիտի լիներ, եկավ ուշացումով՝ ժամը 12-ին, ու եկավ սլովակների 8 հոգուց բաղկացած մի խմբի հետ: Պարզ էր, որ առեւտուր էր արվելու: Ոմանց համար, ի վերջո, սա մի սովորական երթուղի է, որը կարելի է վերածել եկամտի աղբյուրի, ինչը եւ արվել է: Քրդական առեւտուր Մասիսի լանջերին: Արդեն 15-ի առավոտն էր: Մինչեւ 1800 մ բարձրացանք մեքենայով, ապա մեր վերելքի պարագաները, տհաճ սակարկումից ու վճարելուց հետո բարձեցինք ձիերի վրա ու սկսեցինք քայլել: Հաջորդ դրվագը. մեր ուղեկցորդը, փողմ արդեն գրպանում, որոշեց, որ կարող է նաեւ հրաժարվել իր «պարտականություններից»:

նայող հատվածից բարձրանալ թույլ չեն տալիս թուրքերը: Այդտեղով պարզապես երթուղի չկա: Հնարավոր չէ, չի թույլատրվում նույնիսկ Ակոռի գյուղի եկեղեցի այցելել: Ակոռին այն գյուղն է, որը հիմնովին ավերվեց 1840 թվականի հունիսի 20-ի Արարատի աղետաբեր երկրաշարժի ժամանակ, իսկ եկեղեցին մասամբ պահպանված է, ինչով նաեւ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում:

**Խաչատուր Աբովյանն Արարատ բարձրացել է Ակոռի գյուղի կողմից, Մասիսի թամբն ի վեր՝ դեպի գագաթ: Միսի վրա այսօր սահմանապահ պոստեր կան. դա Իրանի հետ սահմանամերձ տարածք է համարվում: Մի քանի տարի առաջ Արարատ բարձրանալու երթուղին հենց դա էր: Այժմ՝ միայն Բայազետի կողմից է հնարավոր ելքը: Քրդերն են ընտրել...**

- Շարունակենք: Մենք որոշել էինք առաջին գիշերումը կազմակերպել 4100 մետր բարձրության վրա: Բայց «մեր քրդի» ստեղծած արհեստական խոչընդոտների պատճառով դա կարողացանք անել 3800-ի վրա: Նրա ուշացման

Արմենի խոսքի մեջ ավստասնքի երանգներ կային: Ի՞նչ է հաջորդում ավարտված ուխտագնացությանը: Ավստասնքը քիչ է: Գուցե անդիմադրելի մի ձգտում, անանուն մի տենչ առ անթերի մաքրություն, առ գագաթ, առհասարակ՝ մի գորեղ կարոտ, որ անհազուրդ է...

Ինչպես Արմեն Չիլիզգարյանն է ասում՝ դեռ բարձունքից չիջած, արդեն կարոտում ես:

Այդուհանդերձ, Արարատի անունը տալիս անպայման հիշում ես Նոյին: Հենց հիշում: Արարատի ու Նոյի բիբլիական առնչությունը կարծես ոչ ոք չի վիճարկում, խոսքն, ուրեմն, Տաթևանին է վերաբերում: Իսկ Նոյան Տաթևանի մասին էլ ու՞մ հարցնես, եթե ոչ Արա-



**Ավարտված է մեկ ուխտագնացություն եւս: Ուրեմն՝ մի քանի հոգու էլ հնարավորություն տրվեց անգոր չմոլորվելու ժամանակի շեկ պարունակներում, եւ մտայաղեն չինչեցնելու. «Ի՞նչ է ճշմարտությունը»: Որովհետեւ մի քանի հոգի էլ արդեն գիտեն, որ այդ հարցի պատասխանը Լուսինյանն է, որը նման է Մասիսի գագաթին նստած Տաթևանը պարտող ալիքների ճողփյունին: Այդ Լուսինյանը, որը Հավերժի բարբառն է, նրանք լսել են: Որովհետեւ Ջանք են արել:**

**Հրույցեց Ավագ Եփրեմյանը**





# Արտակարգը՝ փոքրերի աչքերով

\*\*\*

Արտակարգ պատահարներ, տարերային աղետներ... Իրականում, սակայն, լրատվական գործակալությունների հաղորդած կցկտուր տվյալների հետևում հարյուրավոր, երբեմն էլ հազարավոր մարդկանց պատուհասած ողբերգությունն է, խաթարված ճակատագիրը, հազարների արցունքը, կսկիծն ու մորմոքը:

Աննախաղեպ բարձունքների հասած գիտությունը կարող է այսօր կանխատեսել տարերային աղետների հարձակումը, օրինակ՝ փոթորիկները եւ ցունամիները, հետևաբար եւ միջոցներ ձեռնարկել մարդկանց կյանքը փրկելու համար: Սակայն տարերքը կարող է մարդկանց հանկարծակի բերել՝ ունենալով ահավոր հետևանքներ:



Կոստանյան Մարինե VII Բ

Հազարամյակների իր պատմության ընթացքում հայ ժողովուրդը հանդիպել է բազմաթիվ ողբերգությունների: Դրանց մեծ ծանոթ ենք պատմության գրքերից: Մեր օրերի ամենաահավոր ողբերգություններից է Սոչիում հայկական ինքնաթիռի վթարը: 2006 թ. մայիսյան պայծառ եւ արեւոտ օրը հուսալիության եւ մարդկային բանականության խորհրդանիշ ինքնաթիռը ծովն ընկավ՝ այդպես էլ չհասնելով մի քանի կիլոմետր այն կողմ գտնվող օդանավակայանի վազբուլի: Արդյունքում՝ 113 զոհ, ամենաարսափելի այն է, որ այդ զոհերի մեջ կար 5 երեխա...

**Ալբերտ Մեջլումյան**  
Արտաշատի թիվ 2 միջն. դպրոց, 7ա դաս.

\*\*\*

Ամառային մի գեղեցիկ օր ընտանիքով

որոշեցինք գնալ հանգստանալու: Վաղ առավոտյան դուրս եկանք: Ողջ ճանապարհին մենք կատակում էինք, ուրախ բաներից գրուցում: Մեր ուրախությունը կարծես փոխանցվում էր բնությանը, որն էլ իր հերթին էր մեզ ջերմությամբ փոխհատուցում: Երբեք մտքովս չէր անցնի, որ այդ օրը ճակատագրական է լինելու: Մենք ենթարկվեցինք ավտովթարի: Ոչինչ չեմ հիշում, հիշում եմ միայն, որ երբ պահվեցի, արդեն հիվանդանոցում էի: Հիվանդանոցում էին նաեւ մայրս, հայրս ու փոքրիկ քույրս: Հայրիկիցս բացի, բժիշկների ցուցաբերած օգնությունից հետո մեզ վտանգ չէր սպառնում: Մի քանի օր շարունակ բժիշկները պայքարեցին հայրիկիս կյանքի համար, սակայն՝ ապարդյուն: Եվ այսօր, երբ լսում եմ մայրիկիս, նա միշտ կրկնում է, որ եթե առաջին պահին ճիշտ օգնություն ցույց տային, ապա հայրս կենդանի կմնար: Դրա համար ամեն մարդ պետք է արտակարգ իրավիճակներում պատրաստ լինի ամեն ինչի:

Այս պատահարը մեծ հետեւանք թողեց: Ես ցանկանում եմ, որ ոչ ոք չհայտնվի ինձ նման այսպիսի դաժան վիճակում եւ երբեք չզգա, թե ինչ է անհայրությունը:

**Լուսինե Հարությունյան**  
Արտաշատի թիվ 6 միջն. դպրոց, 6ա դաս.

\*\*\*

Ես ապրում եմ Արտաշատ քաղաքում, որը, կարելի է ասել, աղետի գոտի չէ: Սակայն այստեղ նույնպես վտանգավոր է, հատկապես ամռանը: Այս տարի շատ շոգ էր: Տապը մեղմելու նպատակով ես գնացի գյուղ՝ հանգստանալու: Ես ու տատս տանն էինք, պապս՝ ցորենի հասունացող իր արտի մոտ: Վտանգ կար, որ որդեկ կարող է բռնկվել: Եվ վտանգը չուշացավ: Այրվում էր մեր արտը: Պապս դեսուդեն էր վազում: Աղմուկ-աղաղակի վրա հավաքվել էին մարդիկ, բայց կրակի դեմը չէին կարողանում առնել: Վտանգ կար, որ վառվող արտից կրակը կարող է հասնել հարեւան արտերին: Ես այդ ամենի վախեցած փոքրիկ ակնատեսն էի: Անձամբ եմ տեսել եւ զգացել արհավիրքը: Անմիջապես տեղ հասած հրշեջները ձեռնամուխ եղան կրակը հանգցնելուն: Բայց կրակն իր սեւ գործը տեսավ: Փրկարար ծառայությունից եկած մարդիկ հանգրծին կրակը եւ չթ-

Անցյալ տարի՝ «Հրշեջները համայնքներում» հանրային իրազեկման ծրագրի շրջանակներում Տավուշի, Վայոց ձորի եւ Գեղարքունիքի մարզերի դպրոցների 6-8-րդ դասարաններում հայտարարվել էր շարադրությունների ու նկարների մրցույթ:

Երեխաներին առաջարկվել էր տնեցիների հետ քննարկել ու շարադրություն գրել՝ «Արտակարգ իրավիճակները ձեր կյանքում» թեմայով: Նկարների մրցույթի թեման էր՝ «Աղետներն ու դրանց դեմ պայքարը՝ երեխաների աչքերով»:

Այս տարի ՄԱԶԾ-ի օժանդակությամբ իրականացվող «Աղետներին նախապատրաստման եւ ռիսկի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում նմանատիպ մրցույթ հայտարարվեց նաեւ Արարատի մարզում:

Մրցույթի արդյունքներն ամփոփվելու են մինչեւ հոկտեմբերի 8-ը: Իսկ մինչ այդ ձեռք ենք ներկայացնում մրցույթի մասնակիցների աշխատանքներից մի քանիսը:

դեցին, որ այն հասնի մյուս արտերին...

**Արեւիկ Մակարյան**  
Արտաշատի թիվ 6 միջն. դպրոց, 8-րդ դաս.

\*\*\*

Մեկ տարի առաջ իմ կյանքում այնպիսի արտակարգ դեպք պատահեց, որ մինչեւ հիմա էլ ահ ու սարսուռով եմ հիշում այդ մասին...

Աշուն էր, եւ բոլորը զբաղված էին բերքահավաքով: Մայրս հավաքեց մեր այգու բերքը եւ հորեղբորս հետ ցանկացավ գնալ շուկա: Ես եւ հորեղբորս որդին եւս միացանք նրանց: Ճանապարհին մենք մտանք զազալցակայան, որպեսզի մեքենան լիցքավորենք: Մենք դուրս եկանք մեքենայից եւ որոշ հեռավորության վրա կանգնած՝ սպասում էինք հորեղբորս: Տասը րոպե անց լավեց ուժեղ պայայտում, եւ մեքենան հրդեհվեց: Ոչինչ չէր երեւում, միայն գոռոցներ էին լսվում եւ դետուղեն վազող մարդիկ էին երբեմն հայտնվում:

Մի ակնթարթ հիշեցի, թե տատիկս ինչպիսի



Վարդանյան Անահիտ V ա

սի հուզմունքով էր պատմում 1988 թ. Սպիտակի երկրաշարժի մասին: Հանգիստ ու խաղաղ աշխատանքային օրը մի քանի վայրկյանում ինչպես էր վերածվել տագնապի ու հուսահատության, վշտի ու արցունքների՝ ահավոր ավերածությունների պատճառով:

Ես սարսափից դողում էի: Քիչ անց տեսնելով, որ հորեղբայրս ողջ-առողջ է՝ շատ ուրախացա: Ես ցանկանում եմ, որ բոլոր վարորդներն անվտանգ անցնեն բոլոր ճանապարհները: չէ՞ որ նրանց ձեռքում է գտնվում նաեւ ուղեւորների կյանքն ու անվտանգությունը: Բոլորին կյանքում մաղթում եմ կանաչ ու լուսավոր ուղիներ...

**Անուշ Նիկոլայեան**  
Արարատի մարզ, Վ. Դվինի միջն. դպրոց, 7-րդ դաս.

\*\*\*

Արտակարգ իրավիճակները միշտ էլ վատ անդրադարձ են ունենում մարդկանց կյանքում եւ թողնում են վատ հիշողություններ:

Ես փոքր էի, երբ մեր հարեւանի տանը հրդեհ բռնկվեց: Գիշեր էր: Մթությունն ավելի էր ձնշուն առանց այդ էլ անորոշ վիճակը: Մեր հարեւանները եւ տանտերերը խուճապահար վազում էին եւ չէին կողմնորոշվում, թե ինչ անեն: Հանկարծ մեկը բղավեց, որ զանգահարեն հրշեջ ծառայություն: Եվ չանցած կես ժամ, մինչ անակնկալի եկած մարդիկ կկողմնորոշվեին, թե ինչպես հանգցնեն լափող կրակը, վրա հասավ հրշեջ ծառայողական ջոկատը: Նրանք կազմակերպված ձեւով, ամեն մեկն առանց խուճապի մատնվելու, անցան իրենց գործին: Մեկ ժամ հետո կրակը հանդարտվեց եւ մարեց: Ամեն բան կարծես խաղաղվեց, օդում միայն ծխի քուլաներ էին եւ տհաճ հոտը: այրվել էր տանիքը: Եթե մարդիկ տեղեկացված լինեին, թե ինչ է անհրաժեշտ անել հրդեհից պաշտպանվելու համար՝ այդքան մեծ կորուստներ չէին լինի...

**Մելինե Ալեքսանյան**  
Արարատի մարզ, Դիմիտրովի միջն. դպրոց, 7ա դաս.

## Երիխ Բյոստներ

### Առակ երջանկության մասին

Ծերունին, որ ծխապատ գարեջրատանը նստած էր իմ դիմաց, ամենաքիչը յոթանասուն տարեկան կլինեի: Նրա մազերին ասես ծյուն շաղ եկած լինեի, իսկ աչքերը սպաղուսի պես: «Ես, ինչքան անխելք եմ մարդիկ», - ասաց նա ու այնպես ցնցեց գլուխը, որ ես վախեցա՝ հանկարծ նրա մազերից ձյան փաթիլները չթափվե՞ն: «Ի վերջո, երջանկությունը լավ ապխտած երշիկ չի, որից ամեն օր մի կտոր կտրես»: «Ծիշտ է, - ասացի ես: - Երջանկությունը ապխտածների հետ ոչ մի ընդհանրություն չունի: Թեե՛ն...»: - Թեե՛ն ձեր տեսքը հենց այնպիսին է, ասես ձեր նկուղում երջանկության մի ամբողջ ազդր է կախված»: - Ես բացառություն եմ, - ասաց նա ու մի կուն խմեց: - Ես բացառություն եմ: Որովհետեւ ես մի մարդ եմ, որը դեռ ցանկություն ունի պահած»: Նա քննախույզ նայեց ինձ ու սկսեց պատմել իր պատմությունը:

- Այն, ինչ պատմելու եմ, վաղուց է եղել, - սկսեց նա՝ գլուխը հե-

նելով ձեռքերի ակերին, - շատ վաղուց: Մի քառասուն տարի կլինի: Ես այն ժամանակ երիտասարդ էի ու տառապում էի ապրելուց՝ ինչպես լնդի բորբոքումից կտառապեմ: Եվ ահա, մի անգամ, երբ ես վշտացած ու դառնացած նստած էի այգու կանաչ նստարանին, իմ կողքին մի ծերուկ նստեց եւ, ասես իմիջիայլոց, ասաց.

- Ուրեմն այսպես: Մենք ամեն ինչ մտածել ենք: Քեզ երեք ցանկություն ենք տալիս: Կարող ես ցանկանալ՝ ինչ ուզում ես, բայց վերջապես երջանիկ եղիր: Կյանքից քո դժգոհությունը մեզ ուղղակի գժվեցնում է:

Նա ոնց որ քաղաքացիական հագուստով ձմեռ պապ լինեի:

- Ու թեե՛ն մեզ բացարձակապես չի վերաբերում, թե դու ինչպես կվարվես քո երեք ցանկությունների հետ, - ասաց նա, - սխալ չի լինի մի լավ մտածել՝ ինչ եւ երբ:

Զգիտեմ, դուք կարո՞ղ եք, արդյոք, ձեզ պատկերացնել իմ տեղում: Ես նստել էի նստարանին՝ զայրանալով Աստծո ու աշխար-

հաստեղծման դեմ:  
- Եվ կատաղեցի՞ք:  
- Այո: Իմ հոգին նման էր մի կաթալի, որն ուր որ է պիտի պայթեր:  
Ու երբ նա նորից էր ուզում բացել իր ծերունական բերանը, ես, զայրույթից դողալով, ասացի.  
- Որպեսզի դու, ծեր էշ, ինձ այլևս չբզբզես, ես հիմա կասեմ իմ առաջին ու ամենաուժեղ ցանկությունը՝ կորիք գրողի ծոցը: Դա այնքան էլ բաղաբավարի բան չէր, բայց ես այլ կերպ չէի կարող: Թե չէ կպայթեի:  
- Եվ ի՞նչ:  
- Ի՞նչն ինչ:  
- Նա չքվե՞ց:  
- Այս ա՛յո: Իհարկե չքվեց: Ոնց որ կովը լեզվով լիզեր: Նույն վայրկյանին: Անհետացավ, վերածվեց ոչնչի: Ես վախից ուղղակի վատ զգացի: Ինչպես երեւում է, ցանկությունների հետ կապված այդ պատմությունը խաբեություն չէր: Եվ առաջին ցանկությունն արդեն իրականացավ: Ողորմա՞ծ երկինք: Եվ եթե այն իրականացավ, ապա այդ բարի, հաճելի, սիրալիր պայակը, ով էլ որ նա լինեի, ոչ թե պարզապես անհետացավ ու ոչ թե պարզապես հեռացավ իմ նստա-

րանից, այլ սատանայի ճանկն ընկավ: Գարկավոր էր վերադարձնել ծերունուն՝ անկախ նրանից, դժուր գոյություն ունի, թե՞ ոչ: Ես դա պարզապես պարտավոր էի անել: Եվ դրա վրա ես պետք է ծախսեի երկրորդ ցանկությունը: Ընտրություն այլեւս չէր մնում: Ես փակեցի աչքերս ու վախեցած շշուշացի: «Ուզում եմ, որ ծերունին նորից նստած լինի իմ կողքին»:  
- Եվ ի՞նչ:  
- Ի՞նչն ինչ:  
- Նա հայտնվե՞ց  
- Այս ա՛յո: Իհարկե, անհապաղ: Նույն վայրկյանին: Նստել էր կողքիս, ասես ես նրան երբեք էլ չքանալ չէի հրամայել: Այսինքն՝ ընդհանուր առմամբ նկատելի էր, որ նա...որ նա ինչ-որ տեղում է եղել, որտեղ սատանաներ կան, ավելի ճիշտ այնպիսի մի տեղում, որտեղ շատ շոգ է:  
«Լսեք, երիտասարդ, ձեր կողմից դա այնքան էլ սիրալիր բան չէր»: Ի պատասխան՝ ես ներողության ինչ-որ բաներ քթմնջացի: Իբր, շատ եմ ցավում: Եվ որ երեք ցանկություններից ես սկզբում չհավատացի: Եվ որ ես, այսպես թե այնպես, ջանացի ուղղել իմ սխալը: «Դա ճիշտ է, - ասաց նա, - շատ

ճիշտ ժամանակին»: Այդտեղ նա ժպտաց: Ժպտաց այնքան բարյացակամորեն, որ քիչ մնաց աչքերս լցվեին: «Հիմա ձեզ ընդամենը մի ցանկություն է մնացել, - ասաց նա, - երրորդը: Ես հուսով եմ, որ նրա հետ դուք նույնքան անզույշ չեք վարվի: Խոստանա՞մ եք»: Ես գլխով արեցի ու թուքս կուլ տվեցի: «Շատ լավ, տղաս, - ձեռքն ինձ մեկնելով՝ ասաց նա, - երջանիկ եղիր: Ու չափից շատ դժբախտ մի եղիր: Մի մոռացիր երրորդ ցանկության մասին»: «Խոստանում եմ ձեզ», - հանդիսավորությամբ պատասխանեցի ես: Բայց նա արդեն կողքիս չէր: Ոնց որ քամին տաներ:  
- Եվ ի՞նչ:  
- Ի՞նչն ինչ:  
- Այն ժամանակվանից դուք երջանիկ եք:  
- Այս ա՛յո: Երջանիկ:  
Զրուցակիցս վեր կացավ, կախիչից վերցրեց գլխարկն ու վերարկուն, իր փայլուն աչքերով նայեց ինձ ու ասաց:  
- Վերջին ցանկությանս ես քառասուն տարի ձեռք չեմ տվել: Ցանկությունները լավ եմ այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն իրականացել: Ամենայն բարիք եմ ցանկանում ձեզ...

